ՀՄ 317637 իրավ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» N 340 ՊԱՅՄԱՆԱԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «25» «12» 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի (այսուհետ՝ նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն՝ Ա. Թարվերդյանի (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հիմք ընդունելով 05.08.2019 թվականին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N 340 պայմանագրի (այսուհետ՝ «պայմանագիր») 8.1-րդ կետը՝ կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 պայմանագրի 2.4.4.-ին ենթակետում «2019 թվականի դեկտեմբերի 20-ը» բառերը փոխարինել «2020 թվականի հուլիսի 1-ը» բառերով.

1.1.2 պայմանագրի 6.1.-ին կետում «2019 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերը փոխարինել «2020 թվականի հուլիսի 6-ը» բառերով:

2. Եզրափակիչ դրույթներ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն	Կազմակերպություն
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական 2 շենք ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն Հ/Հ 900011028132, ՀՎՀՀ 02698732 Նախարարության գլխավոր քարտուղար՝	«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ ք. Երևան, Թաիրովի 15 ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն Հ/Հ 900018001843, ՀՎՀՀ 02511401 Տնօրեն՝
_____ Ն. Հարությունյան (ստորագրություն) ԿՏ	_____ Ա. Թարվերդյան (ստորագրություն) ԿՏ